



հ.1423744

26-02-2025թ.

Նախընտրած ծանուցման ձևը՝

Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ «ՈՒՂՂԱԿԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ»

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ

ԱՄՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ ԼՈՌԻ, 2001, ՎԱՆԱԶՈՐ,

ՏԻԳՐԱՆ ՍԵՇԻ Փ., 47/13-1,

directdemocracy451@gmail.com : 37477343745

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Կից 1 ֆայլ:

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Կից՝ 1 ֆայլ

Դիմող՝

ԳԵՎՈՐԳ ԶՈԹԱՆՋՅԱՆ

«Ուղղակի ժողովրդավարություն»

Ժողովրդավարական
ինստիտուտների ամրապնդման
ՀԿ

Հասցե. Լոռու մարզ. ք. Վանաձոր,
Տիգրան Մեծի 47/13-1
Հեռ. (+374)(77) 34-37-45



“Direct democracy” NGO for
consolidation democratic
institutions NGO
Address: Lori Region, Vanadzor
Tigran Mec 47/13-1

Tel. (+374) (77) 34-37-45

Լոռու Մարզպետի աշխատակազմ

Մարզպետ Արամ Ղազարյանին

Հարցում

Հարգելի Պարոն Ղազարյան

Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատարի [թիվ 2693](#) որոշման.

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ, ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ Ա. ՇԻՐԱԿԱՑՈՒ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԼԱՎԴԻՅԱ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ԿՈՍՏԱՆՑԱՆԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող, Վանաձոր համայնքի սեփականություն հանդիսացող 120.0քմ մակերեսով հողամասը, համաձայն Վանաձոր համայնքի անվամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 18102024-06-0076 վկայականի, հողի կադաստրային արժեքով՝ 346500 (երեք հարյուր քառասունվեց հազար հինգ հարյուր) դրամով, ուղղակի վաճառքի ձևով օտարվել է Կլավդիյա Ալեքսանդրի Կոստանյանին՝ հողամասի ընդլայնման նպատակով, որի համար հիմք են ընդունել 26.04.2023թ. Վանաձոր համայնքի ավագանու [թիվ 34 որոշումը](#), սակայն համայնքի ղեկավարի որոշման մեջ [09.12.2024թ.-ի համայնքի ղեկավարի 2709 որոշմամբ](#) փոփոխություն են արել՝ որոշումից պարզապես հանելով վերնագրի «ավտոտնակը և» բառերը:

Խնդիրը կայանում է նրանում, որ ավագանու [26.04.2023 թ.-ի թիվ 34 որոշման](#) մեջ նշված հասցեով հողամաս առկա չէ:

Խնդրում եմ պարզաբանել, ինչ հիմքով է իրականացվել ուղիղ վաճառքը, արդյոք ամեն դեպքում առկա է ավտոտնակ, թե հողամասն օգտագործվում է այլ նպատակով:

Ավագանու համապատասխան որոշումը չունենալու պարագայում խնդրում ենք ձեռնարկել քայլեր՝ համայնքի ղեկավարի կողմից ակնհայտ ոչ իրավաչափ որոշումն անվավեր ճանաչելու համար:

Հարգանքով՝ «Ուղղակի ժողովրդավարություն»

ՀԿ նախագահ Գ. Քոթանջյան

26.02.2025թ.

